

**«Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդեսի
համացանցային հարթակում գրանցման
ուղեցույց**

1. Գրանցում կայքում
2. Հոդվածի տեղադրում

1. Գրանցում կայքում

«Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդեսում հոդված հրատարակելու կամ ներկայացված հոդվածները գրախոսելու համար անհրաժեշտ է գրանցվել «<https://journals.yasu.am/index.php/hist-cult/user/register?source>»-ում:

Գրանցման դաշտում հարկ է լատինատառ գրանցել Ձեր անունը, ազգանունը, կառույցը (օրինակ՝ ԵՊՀ), ընտրել պետությունը, գրանցել Ձեր էլփոստի հասցեն, ապա գրել «Username»-ը և «Password»-ը:

Այս քայլերն անելուց հետո անհրաժեշտ է համաձայնել ներքևում շարադրված կառուցներին և սեղմել «Register» կոճակը:

2. Հոդվածի տեղադրում

Նոր հոդված ուղարկելու համար անհրաժեշտ է վերոնշյալ դաշտ մուտք գործելուց հետո սեղմել «Submissions» կոճակը, որից հետո՝ աջ մասում հայտնված «New Submission»:

«Section»-ում պետք է ընտրել, թե ինչ տեսակի նյութ եք ուզում հրատարակել՝ հոդված, գրախոսություն կամ հրապարակում: Դրանից հետո անհրաժեշտ է նշել բոլոր վանդակների մեջ, որ Ձեր կողմից ուղարկվող նյութը համապատասխանում է անհրաժեշտ պահանջներին (սախկինում չի հրատարակվել, բավարարում է տեխնիկական պահանջներին և այլն):

Անհրաժեշտ է ընտրել «Article Text», ապա սեղմել ներքևում «Upload File», ընտրել Ձեր հոդվածի ֆայլը, որից հետո սեղմել «Continue» կոճակը:

Այնուհետև կարող եք «Edit կոճակի միջոցով կարող եք խմբագրել ֆայլի անվանումը: ԱՅՆ ՉՊԵՏՔ Ե ՊԱՐՈՒՆԱԿԻ ՁԵՐ ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆԸ, քանի որ ուղարկվելու է գրախոսման: Այս գործողության ավարտին պետք է սեղմել «Continue» կոճակը:

Դրանից հետո համակարգը թույլ կտա ավելացնել հավելյալ ֆայլ: Ապա պետք է նորից սեղմել «Continue» կոճակը, այնուհետև՝ «Save and Continue» կաճակը: Կբացվի պատուհան, որտեղ պետք է գրել հոդվածի վերնագիրը, ապա տեղադրել սեղմագիրը, որում կրկին պետք է նշված չլինեն Ձեր անձնական տվյալները: Ապա բացված պատուհանում պետք է սեղմել «Finish Submission» կոճակը, որից հետո համակարգը կհարցնի, թե արդյոք ուզում եք հաստատել: Պետք է սեղմել «OK»:

Դրանից հետո Ձեր էլփոստի հասցեին կգա նամակ խմբագրությունից, որ Ձեր հոդվածը գրանցվել է: